քակրթված են, ասում էր Հիւսէյին աղէն, իւրեանց վայրենի քրդերի վերայ երբէք ուշադրութիւն չեն դարձրել։ Ո՞վ կը փախչի քաղաքակրթվելուց, հարստութիւնից, բարեպաստիկ կեանքից, բայց այդ ամենի համար մի միջնորդ է պէտք և այդ միջնորդը հայերը միայն կարող են լինել մեզ համար։ Ես երախտագիտաբար եմ յիշում սովի տարին, պէտք է խոստովանել որ հայերը առաջին քայլն արին դէպի մեզ։ բայց դա բաւական չէ»։

Այնուհետև Հիւսէյն աղէն խիստ հետաքրքրութեամբ տեղեկութիւն խնդրեց հայկական հարցի ներկայ ընթացքի վերայ և ես ուրախութեամբ մանրամասնաբար նորան ծանօթացրի խնդրի հետ։

«Ուրեմն հայերը իւրեանց մէջ ոչինչ պատրաստութիւն չունեն, իւրեանց վրայ յոյս չունեն և յոյսը դրել են Եւրոպական տէրութեանց վրայ միայն»—ցաւակցաբար բացականչեց Հիւ-

---

ված ձայնով, կանչում էր ինձ, յայտնելով որ գիւղի ոչխարները բերել է եւ նրանք այժմ ձորի մէջն են։ Դը-ժուար էր հաւատալ եւ այնպիսի երկիւղալի ժամանակում պարսպի դուռը բանալ, ասում էր վարդապետը։ Չորս առներից մէկին կախեցի պարսպից, որ ստուգէր գործը։ Շուտով ծառան երեւաց պարսպի տակին յայտնելով, որ խնդապէս ոչխարները ձորի մէջ էին եւ քուրդը անհրաժեշտ էր։